

ԺԵ.

## ՀԱՆԵԼ ՈՒԿՆԵՐ.\*)



Ալաօկերսի բարբառով.

—Ալ եզնիկ, ալա եզնիկ,  
Շուարած՝ կայնած եզնիկ:—Քարէ սիւն:  
—Առաւօտուն թառի, յիրկուն իջնայ,  
Յիրկուն թառի, առաւօտուն իջնայ:—Անկողին և հաւ:  
—Արապ—արապ, արապստան,  
Էրկու պարսր էկան նստան,  
Ջոջեր յէլան, պղտկներ նստան:—Մեծ և օրական տահք:  
—Արաքն հեծեր ուր ձին,  
Կարմրուկ ու կը լզայ:—Պտուկը թունդրայ վրայ:  
—Ափ տամ, ծափ տամ,  
Քեանքըլից բռնեմ, կախ տամ:—Կշեռք:  
—Բան Բասեն, Բանլիս Տրապիզոն:—Միտք, երեակայութիւն:  
—Բեռնով բարձուկ կզ,  
Յերդիքէն ներս մտաւ:—Գղալ:  
—Բերան ունի, լեզու չունի,  
Փոր ունի, աչք չունի,  
Ու ունի ծակ չունի:—Դիզ:  
—Բռնեցին պոչէն, թալեցին ֆօսէն:—Չամիչ:  
—Բերդ մի կար, ճիւղ չկար,  
Ղազին ի մէջ դիւան չկար.  
Թաքաւն էկաւ,  
Թուղթ ի ձեռ, գիր չկար:—Նոյեան տապան և աղաւնի:  
—Գոմ մի ունիմ, հազար գլխ օխար կը տանի,  
Մէկ խիլ խոտ չտանի:—Մըջնոյ բոյն:  
—Սզ դուռը կը մորթայ,

---

\*) Հանելուկներու թիւ ու հաշիւ չկայ, աստղը յանկարծ կստեղծէ ու կասէ. այս տեղ միայն սովորականները առի. զորս ամեն զաւառ զրէ-  
թէ քիչ նման են իրարու.

Ներսէս հոգին կիտայ—Ջրաղացի ջուրը կտրել:

—Եղ ծնաւ, բերեց կով—Աղամ, Եւայ,

—Ես, ճիճօն գացինք սար.

ձիճօն չկողներ, կը մնինք սար—Աչքեր:

—Էն ինչ ա, աշխարհը չկեառնայ չիքայ,

Չարտու մարդ կը չիքայ—Հաւ և ձու:

—Էն չի՛նչ ա, Վարժան, չորժան,

Պայազտու ճամբէն լցուած կերթան—

—Էն քնչ ա, պզտիկ պուտիկ մէջ անուշիկ—Ընկոյզ:

—Ընձի բան մի կայ, բան չը մանի,

Ծիծուի գլօխ խառամանի,

Վայ ընդոր որ դէմ կը կայնի—Հրացան:

—Ընձի գոմ մի կայ, խիլ չտանի,

Քառասուն գլօխ դաւար կը տանի.

Դանկով դուռը բացեցի,

Մտայ ներս, համբուրեցի,

Յէլայ դուս, քար թալեցի—Նուռն:

—Ըսդին դար, ընդին դար,

Մէջն անդադար—Օրօրոց:

—Ինչ մարդ էր, գնաց մամու մօտ,

Մամ ըսեց.— Ընձի մէք մօտկընայ.

Հալա ազատ իմ—Հող, Կայէն—Արէլ:

—Ինքն ի հող, մուրուքն ի շող—Ըռաֆատայ:

—Իքի—Իքի,

Յոտներ կիքի,

Վիզն արարի.

Յոտներ թուրքի—Աքաղաղ:

—Իքի—Իքի,

Յոտներ կիքի,

Ջոնալապուտ,

Թուրքի լեզու—Լակտան—Կեմման:

—Լեսան—Լեսան, փըլպտան,

Դեղով ընցան, չտեսան—Ձուկ:

—Լուն թաւ կարպէն,

Ջըլթիկ զարկեց դիւան խանէն,

Ծառ մի կտրեց Հնդստանէն—Կայծակ:

—Կալ կաշի, կամն երկաթ:

Ջուր տուր ու քշայ—Արծեկի:

—Կարմիր եզ, սև եզան վոռ կը լիգայ—Թունդիրն ու կաթսան:

—Կըսիմ արի, արի, չի գար,



կըսիմ մի գայ—մի գայ, կիգայ—նրթունք.

Կօտիկ կործրման, չուր էրևան—Սունկ:

—Հանելուկ—հանմանելուկ,

Ծէրն ի՞ժողիկ, տակն աւիլուկ,

Թէ հանիս, տակն ուտիս,

Թէ չհանիս ծէրն ուտիս—Խաւըրծիլ:

—Ձին ի ձոր թամբեցին,

Բաժն էրկինք յէլաւ—Թունդրա շէնք ու բոց:

—Մարդ մի էկաւ էրկնքուց,

Դըռ չընտառ ճութեցուց:—Անձրև:

Մզի կայ էրկու տուն, մէկ սուն—Քիթ և ծակերը:

—Մութ փողան, յէրկէն սողան,

Սարկաւազներ մէջ գըղուըղան—Փեթակ և մեղու:

—Յիթսուն տուն մէկ սան վրայ:—Վայրենի մեղուի բոյն:

—Նեղ ու մութ սոխաղ,

Սալլին մէջ կերթայ կիգայ—Յըցում և կարագ:

Ուլուիկ—պուլուիկ,

Մէջը սէյլան ուլիկ—Նուռն:

—Ութ չորթան, տուերկու սուլթան,

Գիշեր յէլէ՝ բարձէ կերթան:—Աստղեր:

—Ձըլէ զման,

Նիսուն բումպան,

Նա՛ գետվուր քր. նա մուսուլման:—Օձ:

—Չորս հրեշտակ, մէկ փլի տակ—Կով և ստիճները:

—Չորս յոտն ի հող, երկու յոտն ի կող:—Ձիու ու ձիաւորի  
տաքեր:

—Պառաւ նստե յառուի պռունկ,

Գըրջ վըր քըջին, քըրջ վըր քըջին:—Կաղամբ:

—Պառաւ նստե վըր դարին,

Բուրդ կը գգայ. թթու կուգայ:—Կաղամբ:

—Փաթութուռա խտիր, գնաց յետիւր—Մեռել և յուղարկաւո-  
րութիւն:

—Քարէ գողտիկ, դռչկան հըրթիկ—Կարկուտ:

—Քրատ յունայ, քըատ յունայ,

Խռովի նստի յունայ—Աւել:

—Քսան ու չորս աստղ մէկ լուսնըլի տակ—Պայտ ու գամեր:

—Ամպ յերերան, քնաբաց շերերան,

Ամպ գնա, քնաբաց, դու արի:—Մեռել, յուղարկաւոր:

—Էն ինչ մարդ ա,

Նա գլուխ էրկինքն ա, նա յոտքեր դետին:—Ձիթանքի պողու-  
տակ:

— Երկու ձուկ մէկ թաւի մէջ, մէկ պաղ, մէկ տաք։— Լուսին և արեգակ։

— Կտոր մի թռաւ ուռի ծառէն, մէկ լէ բարտի ծառէն, Նա ուռի էր, նա բարտի։— Զորի։

— Յուցկայ հարի Վան, քառսուն կտտիկ կործրման։— Սունկ։ Ունունի։— Բուն ունի, կատուի պէս կառուց ունի։— Սիսեռ։

— Սլուրլիկ յէլաւ սարն ի վեր, սրբեց տակնուկեր։— Արծելի։ Սև սլա սիւտակ սլա, խաթուն միջին կը ճուլլայ։— Աչք։

— Էն ինչն ա. ռաճաթէն պատէն կախ։— Մորուք։

— Մէկ բակ օխչար ունիմ, քնայ, յէլայ մի հատ չկէր։— Ասաղ։

Ընձի չորս աղբէր կայ, չորս լէ սալին չալկած։— Նղունգներ։

— Ընձի բան մի կայ, կը չալկեմ, գիլայ.

Կը դրիմ գետին՝ կը մեջի։— Ժնջիլ (չղթայ)։

— Հաւք մի յիջաւ էրկնքուց,

Օսկի լական էր կտուց,

Հայ էրեց, հայ էրեց

Իրեք բան քաշեց, չգտաւ,

Թորկեց, գնաց։

{ Նրկնուց գետին սիւն չկայ, ծովուն ծածկոց չկայ, Զորին լէ ծնունդ չկայ։



## 2.

## Վաճառք բարբառով.

Ամառ կը պաղի, ձմեռ կը լկի.— Գթի լորձունք,  
 Անմաղել ավեր, անտաշել փէտ. անգեօրձել ատլաս,  
 Ինչ էմ ես, աչքի խասկընառ.— Փշտո:  
 Արև փրակի, արև քիակի,—  
 Բան մը կեայ պաննոց ի. պաննոցի տակ խայթոց ի.  
 Ձէն կը խանի, մեռել յարոց ի.—  
 Դլեօխ շան, պոչ մկան. թստեմ ինե, կնա խան.— Սիկար,  
 Էլ վեր ելին, թագեաւոր վեր տէլին.  
 Թուանգնով դարկին, բրինդար արին.  
 Արուն թաղեթաղ ցրուեցին,  
 Ուսկոռ տուն խորիցին.— Խնոցի հարել,  
 Էրկէն փողան, նեղ նեղ սօղան,  
 Կուզ մարգարէն կերթայ, կիւգեայ.— Դուան սողնակ:  
 Էրկու առու ճիւղ կերթայ. խինգ ախպէր դէմ կերթայ.— Գիթ  
 արբել:  
 Կարմիր կով տանտուն կը բռայ, սև կով տանիս կը բռայ.— Բոց,  
 ծուխ:  
 Կարմիր պուտուկ վեր դարին, աչքով կանի դուգնդարին.— Կատար:  
 Կեռ ու մեռ, էրկթէ պիպեռ.—  
 Ձին ու ջորին, քուռակ փորին.—  
 Մէ ծառ մը կայ ճճան ի. ճճանի տակ մէջտան ի.  
 Մէյթրնի տակ կալամ ի. կալամի տակ կթղայ ի.  
 Կթղի տակ զուռնայ ի, զուռնի տակ մարագ ի.  
 Մարագ իլին ուրագ ի.— Մարդու դէմքը,  
 Մարդ մը էկաւ Աւանուց. դել չէր իկե մէյ թուուց.— Բարև,  
 Մէ ծով մը կայ, ծովու մէջ օձ մը կայ.  
 Օձու բերան խնձոր մը կայ.— Ձիթէ ճրագ:  
 Մէյ քիթ. քառսուն աչք.— Տրեխ:  
 Մէյ խաւ թռաւ էրկնքուց, ոսկի լագեան կէր կտուց.— Արեգակ:  
 Մսէ պերդ, երկթէ բարանճա.— Ձի և ասպանդակ,  
 Մսէ պուտուկ, ուսկոռ է խուփ.—  
 Շլկիմ կը վժայ, գետին դնեմ ձէն կը կտրի.— Շղթայ,  
 Ուլուլիկ, պուլուլիկ, մէջն իլին կարմիր ուլնիկ.— Նուռ:  
 Պստիկ պուտուկ, անուշ ճուպար.— Ընկոյզ,  
 Պօլառ կտել, կպե պատ.—  
 Տուն մը կայ, տուն մէլ ինե, դեղին դաւիթ նստե ինե.— Հաւկիթ,  
 Որ տեղ մէյ դիր արև տեսաւ.— Կարմիր ծովի յատակը:

## 3.

Նորագույն Սիբուհիս գիւղի բարբառով.

Բերան սև ի ալամաթ, մէջը կտրմիր ի սալամաթ  
Թաց կը գանեմ, չոր կը խանեմ, սալիալա Մահամաս. — Թունտիր  
Ինեմ ու, գիւտես. — Զրաղաց:

Էն իշ Բեմուդի էրկու մօրուց ծնած. — Զրաղացի նաւի, յաաա-  
կէն դուրս տուած ջուրը:

Էն իշ տղայ էլաւ մօրուց, դրեցին թագեաւոր, տասը խինգ  
տարի թագեաւորութեն արեց. տասնըվեց տարուց միջ խինգեաւ,  
հասուն տարին քմեց, մեռաւ. — Լուսին:

Իրեք խարիր վաթսուն վեց լաք, յըմն լաքին մէկ միլիանով  
օխչար, էրկու բեօն, ասուերկու ծաւի. — Տարուայ օրեր, աստղեր,  
երկու դասիկ, տասներկու ամիս:

Խինգ խատ օխչար ի, իրեք ձմէն ի, էրկու բառօմնին Տարին  
արսուերկու ամիս նա՛ էն կեհայ մը ինօր, նա էն կեհայ. — Զինգ  
նուակատիք:

Մաքին ծուռ ի, էն գեառ իշ մաքուց կը ձնի, չըզ մաքին ծուռ  
ի, էն իշ գեառուց կը ձնի, չըզ գեառ ծուռ ի. — Ուրթ, գինի, օղի:

Ձէն կը տայ մեռել յարուց ի. — Աքաղաղ:

Ձի ծառ մը կեայ, ճճան ի, ճճանի տակ մայսան ի, մայսանի  
տակ կթղայ ի, կթղայի տակ զուռնայ ի, զուռնայի տակ ակնատ ի,  
յակնատի մէջ յըլին ուրազ. ուրազի տակ տիկ, տիկ տակ նեղ ծակ,  
ծակի տակ անտակ ծով. — Իլուխ, ճակատ, աչքեր, քիթ, բերան, ա-  
տամներ, աստմոքս, աղիք, փոր:

Մէ ծառ կայ, եօթ ճուղ ունի. ամեն ճուղին անուն կայ. — Շաք-  
թու օրեր:

Մէկ կայ, չունի ոտք. մարդու կը գանի, մարդ չակալի. — Սէ.

Մէկ կեօղով հլին ձու, տուրան դրեցին յիրդիս, խըլսուուն,  
էլան, մէկ չմնաց. — Նրկինք, աստղեր:

Մսէ չիշ, էրկթէ քեապապ. — Մատ, մատանի:

Չալիք մը կայ էրկու քաւ կիօ մէջ, մէկ ոսկի, մէկ արծաթ. —  
Արև, լուսին:

Չորս վեր տասին, ծով վեր ծնկեան, էն ով ի ճկուեր վեր քեօ-  
կըյնկեան. — Կով, կթող, կթոց:

Քեապապնին քեապապ կը չինի աղ չկայ. մաքին կը պուայ,  
դեառ չկայ. — Նչխարք, սրբութիւն:

Քեառ վըր քեալին քեառ չի. կը կռկուայ կաքեաւ չի, ձու  
կածի խաւ չի. — Կրիա:



## 4.

## Կարձկամայ Նամերկամց զիւղի բարբառով \*)

Բոյօր յեղեկեցի, դանկով դիւռ բացի.— Նուռ:

Էնիկ ինչ ի, մոկիկ ասումը, սասնուխինգ ծաղկունք,— Ս. Աս-  
տուած:

Էրիւռ ոսկի լայլակ, առաւօտման դանկեր տունն, ընցան ծո-  
վու վրէն, իրիկուն վերջացան.— Արեգակ:

Թըխկ—Թըխկ տախտակ, շալէ շապիկ ծակ—ծակ.— Կտաւագործ:  
Թիզմ քեաշեմ, խանգիստ քնեմ.— Իռան փակ:

Խանելու խանմանելու. մէջն ուտելու, դիւս թալելու.— Ձմերուկ:

Մազմ չորթան իրկուն դրիմ դիւռ, առատման էլամ, չկէր.—  
Աստղեր:

Չլաուիմ, թոնիմ քեամակդ.— Կուժ:

Պոլատ գտէլ, դեղի դընաէր.— Գրգիր:

Ու բազին կը վազի, սլատակ բազին ու կը լիզի.— Ծուխ ու  
բոց:

Սե կոյ գետնին տակ կը բօռայ.— Բողի:



## 5.

## Թիմառայ Կիւսնեմց զիւղի բարբառով \*).

Արսէ թառ, մէջ իլին մազ.— Կակաչ:

Գհազմ քեաշեմ, խանգիստ քընլիմ:

Խանելիւ խանդակելիւ, մէջն ուտելու, տիւս թալելիւ.— Նուռ:

Մէյ բանմ կայ. ըստիէն չոր վան, վանայ չուր Ոստան ան-  
ջուլ անչուան, բարցուաւ կէրթայ.— Մըջիւն:

Մէյ բանմ կայ հանի—հանի, պտկընէր Սպըհանի,

Կաթ Կուտայ, տուն չի գեայ.— Խաղող:

Մէյ բան կայ վազե վազ, գըրիօխ կուտայ քեառսուն գեազ.— Վիլակ:

Սարի գըման, էրկթէ գըման,

Նըա մուսուրման, ճըա գեաուրման.— Օձ:

Տունմ ունեմ, տուն մէլ ինե, դեղին դաւիթ նստե ինե.— Հաւկիթ:

Փէտ փէտի աղբէր, ջրի խօրդբէր,

Իմ սիրելի դաբըն քաղաք չի մտնի.— Նաւ:

\*) Ասած է Արմաղան Մարտիրոսեան:

1) Ասած է Խուռօ Սարգսեան:

## 6.

Տրապիզոնի հայաբարբառ գիւղացիներու բարբառով.

Աշխարքի հօթը հասնիկու, հաւին պոչին հասնիլ չի կայնայ.  
— Ճանապարհ:

Այջ մը դուգայ մամբուալի, գօտին հիտը ջնկջնկալի, — Զրաղաց:  
Այտ մը ունիմ, ափ չունի, մէջի սօրքը համարք չունի. — Աստ-  
ղեր, երկինք:

Բարակ ճաղ մը ունիմ, աշխարքը սիրունցընէ կու. — Ասեդ:  
Դառնայ կու — դառնայ կու, քօնի դառնայ, քօքի (գիրանայ)  
կու. — Մասուր լեցնել:

Դարակ — դարակ դասպառակ, կէսը գօյծուած, կէսը գօյ-  
ծուելու. — Ձեռք և մատներ:  
Դար պուռկին կծկեցուցի, էրկու մատցի ծռթկեցուցի. — Մատ-  
ներով քիթը խնչել — սրբել:

Եիս կեչտօմ, էն կեչտայ, էն ինձիկի մէնէ տուաջ կեչտայ. — Շուք:  
Էն ինչինէ, էմեն բօնի վրայ կայ. — Անուն:  
Էս դին դար, էն դին դար, մէջը օնդադար. — Որօրոց երախայ:  
Էռսուն էրկու աղջիկ էինք, մահին զայնուեցօնք.

Կեճէ էլօնք շարուեցօնք. — Սանդերք:  
Էրկէն էրեց, ագուին ցուեց. — Կուկնի ծառը, կիւլ կոչուած խէժ:  
Թափէ թափիչ է, պահար կիւմիտ է,

Օչ էրկնուց է, օչ գետնուց է, աշխարքի էրեսին է. — Արեգակ,  
Ինքը նիյս, գլուխը դուս. — Դամուած գամ:  
Լպսարակ — լպսարակ, քարէ պատակ,

Քօնի թռչի պինդ — պինդ քօքի. — Մեծ մասուր, կալօմ:  
Կապիմ կու կեչտայ, աքգրիմ կօղնի կու. — Տրեխ:  
Կարմիր երգը յօրսր գումը գնաց, պոչը ձեռքս մնաց. — Կեռաս:  
Կարմիր երգ մը ունիմ, պօռչայ — պօռչայ գետնի տակնիւմիր  
բազուկի կեչտայ. — Սրմատ:

Կուլմը ունիմ, ըղըր — մըղըր, կօտուլունին սղըր — մղըր.

Կաթ կուտայ տուն գալ չի. — Լագուտ:  
Կով մը ունիմ օնի — օնի, կօտուլունին ձըրծրօնի. — Քարպին —  
ձօն կղջի բաւոր բզէզը:





## 7.

## Խլարայ բարբառով.

Ամպ էրերուն, քարվան ճերերուն.

Ամպ, դու գնա, քարվան, դու արի.—Մեռեալ, յուղարկաւոր:  
Ան հոգեւոր էլաւ սար, հոգեւոր բերեց ցածր.—Սանտր և ոչիւր:  
Բուխէրիկ, քու մօր իրիկ, անչամ ափայ, չասայ խէրիք.  
—Դմբուկ:

Կով մի ունիմ, կը սանեւմ վըր ջըրին. ինքը չիմայ. կապ կը խմայ.

—Ճրագ. պատրոյգ:

Ձին ի ձոր Թամբեցին, կհամն երկինք քեաչեցին.—Թունդրայ  
ծուխ:

Մսէ բերդ, էրկթէ Կաւաննա, շատ լէ ինասնուի կը խրխնա.

Ունիմ մէկ տապակ. մէջը էրկու ձմերուկ. մէկ տաքուկ, մէկ պա-  
ղուկ.—Արե, լուսին:

Ունիմ քառսուն պնակ, տմէկ պնկին քառսուն դմակ.

Ամէկ դմկին քառսուն դանակ, ամէկ դանկին քառսուն բերան.—  
Պապէ մի կայ ինք ի հող, մորուքն ի շող.—Բողկ:

Սև սլայ, սըւտակ սլայ, խաթուն մէջ ճըլվըլայ.—Աչքեր:

Քամին էկաւ հով բերեց, եզը ծնաւ կով բերեց, մեղի էս աշ-  
խարհ ով բերեց.—Աղամ ծնաւ Եւայ:

Քարէ գոմիկ, դուչկան էծիկ.—Աղանձ (ի Կարս խիծալս կասեն):

Քու ճարտու քեար վիճր վոռ.—Ատամներ:

Փու ապք—ապք շերեփ վիճր վոռ.—Լեպու:

## 8.

## Ռօսնցոց բարբառով.

Առնեմ էրկու մատ, տանեմ քեօ էրկու ծակ.—Քթախտ, քիթ:  
Անչիւնչ ծնաւ, շնչմար իբի.—Ձու:

Ութ ութեն, ութմա Թութէն, մէնի ծակ, ուրախութեն.—Սրինգ:

Քեար ու փէտ, գիրկ ու ծուց, տաք փողոց, ձեռ սրբոց.—Ընկոյզ:

## 9.

Արծկէի Առնճկոյս գիւղի բարբառով \*)).

Աշխրբի մէջ ինչ ա ղլաւ.—Հոգ:

Երկու մարդ իրարու հետ կը վիճէին թէ աշխարբի մէջ քանի ձոր կայ. սոքա կընկնին ճանապար որ ձորերը համարեն: Քանի ձոր ման եկան, մի ձորի մէջ գիշերը իջեանեցան:

Ձորերու տէրերին սրբ սովորութիւն ունին զմարդ ստքի կողմէն ուտել, կգան կը տեսնեն մի մարդ քնած է, զլուխը իրենց կողմ. կանցնին ստքերու կողմ, կը տեսնեն դարձեալ մարդու զլուխ, զարմանալով իրարու կասին, մենք հազար երկու հարիւր ձոր աշխարհի վրայ շրջած ենք, երկու զլխանի մարդ տեսած չէինք.—Քանի հանելուկ կայ, լուծէք:

Էն ինչ կնիկ էր, պառկաւ. ջուխտ մի երախայ բերեց. էդոնց քեամկներ կառւկ ին. ինչով պտի էն էրեխէք մէ մէկուց ջոկեն, օր իննիքմիս չեղին: Ասեց.—Էն էրկու էրեխէք, խոզին ու մարմին են, էն վախտ օր կը տանին գերեզմանի վրէն, «Փառք ի բարձունս» կասեն, էն վախտ խոզին ու մարմին իրարուց կը բաժուին:

—Էն ինչ մարդ էր, համ սւր մամու իրիկն էր, համ տղէն:

—Մարդու մեղք իրիկն ա, ծնուելէն ետք տղէն ա:

Քառասուն մօլլա մէկ իրիցու ըռասօ էկան, բռնեցին օ, ջուրը էցգին, էրեցը ասեց.—Արէք մէկ ճեղկէ կանգնենք. վեց վեց խամբըրենք: ամէկ վեցին մէկ չուր էցգենք. տէրտէր էլա ճեղկի ցածր կայնի. մնաց մէ մօլլա ու էրից. մկայ սր մէկ ջուրը պտի էցգենք:



\*) Աշղ Բէնկին Խլաթոյ Թեղուտ գիւղին էր եւ հուշակուած հանելուկ ասելու մէջ. սա մի օր կգայ Առնճկոյս գիւղն. գիւղի մէջ մի հասկացող մարդ սորա հպարտութիւնը սանձահարելու համար վերի հանելուկները կառաջարկէ:



## 10.

Մօռյ բարբառով \*)).

Ամռան գայ, աշուն իր մեռնի. ձմռան իր կատրի.— Խաղող,  
գինի:

Անջուր ջաղաց, անկրակ բաղարջ.— Խորխոր:

Արեւիկեց արեմուտք, հիւսիսէն հարաւ անուն կայ, մարդ չէ,  
հրաշք իր գործէ Աստուած չէ.— Ոսկի:

Սա ճիճին էլանք սար, ճիճին չեղներ իր մենէնք սար.— Աչքեր  
էնի ինչ է, օխտը լեզու ունի բերան չունի, մարդ իր կծէ.  
— Եղինջ:

Սա տղայ, դու տղայ. քրնի զարկիմ, իր լիվղայ.— Դավու:

Էս տեղ ցանիմ, Ստամբուլ քաղիմ.— Նամակ:

Էռտուն էրկու ուրազ, մէկ պտուկ.— Ատամներ:

Էրկու մեռել, մէկ սպտանք.— Հաւկիթ:

Ընձի էժ մըկայ, յըմն տեղ կարծայ. պալի տակ չարծայ.  
— Գերանդի:

Ընձի մի կոլ կայ, կոլի մէջ մի օձ կայ, օձի բերան հուրնի  
հրեղէն.— Ճրագ:

Ընձի մի ձի կայ. ձիու փոր քուռակ մի կայ. քուռակի փոր լէ  
քուռակ մի.— Միրան և կուտ:

Ըստուց չուրի վան, քառսուն կոտիկ կործման.— Սունկ:

Ինչ է. վիզը քաղք-քաղք, խոտ կուտէ. ջուր չիմէր.— Շերամ:  
Իմ պապ ու քու պապ մէկ պապ. ես ու դու քուր ու ախպէր,  
ես քու մամ, դու իմ տղէն.— Ղովտի աղջիկն ու որդին:

Ինքը դեղ, կաշին տեղ.— Ունի:

Ինքը նուրի, պոչն հալապի.— Անծեղ:

Կըչըռեմ 1) հըտ նուկուն, զարկեմ քու մամու գողուն.— Գողնոց:

Հարիւր հաւկիթ լըր յերգըկին.— Աստղեր:

Հաւք մի իջաւ էրկնուց. հաւ էնեց. հու էնեց, իրեք բան աշխը-  
քէն վերուց.— Մէկ աղին բուս չկայ. մէկ ջորուն ծնունդ չկայ. մէկ  
երկնքին սուն չկայ:

Ձէնը կայ, ինքը չկայ.—

Մազէ ջուլ փռիմ տակդ, խղիւզան առնէ ծակդ.— Երկանաքար:

Մսէ տանիք, մազէ ցուիք.— Շրթունք ու ընչացք:

\*) Ասած է Սմբատ Տէր Ղեւոնդեան:

1) Սա երկու նշանակութիւն ունի. կշռել եւ միզել:

Շուեմ ոռդ, կատղիս.—Ջրաղաց:  
 Նստի մէկ է, կայնի էրկուս.—Մարդ և իր շուքը  
 Որն էր, էրկու հաղ ծնաւ.—Յոյնան Մարդարէ:  
 Որն էր ինքը ունէր քառսուն օխչար, թորկեց զուր, զնաց գող-  
 ցաւ ուրիշի մէկ օխչար.—Դաւիթ Մարդարէն:  
 Չորս հրչտակ, մէ պատի տակ.—Կով և ստինքները:  
 Պիպին էլաւ սար, բերեց հինգ հազար.—Արծելի:  
 Ռաֆաօէն, կախուած պատէն,—Մօրուք:  
 Փութ փէտ փորի, ասլան մէջ հորի.—Քուրն ու պատեանը:  
 Քղի դրեցի, կպաւ.—Անուն:  
 Քստաց հողա, քստաց հոնա, ըռքաւ, նստաւ հոնա.—Աւել:

## II.

### Բառեմի բարբառով.

Պատեմ զմիշ, էրթիքէն կախ.—Արև:  
 Էրկու սուլթան մէկ սարի ետև.—Աչքեր:  
 Էրկու տուն, մէկ սուն.—Քիթ:  
 Էրկու փուռնիտ պատէն կախ.—Մծեր:  
 Կարմիր թագին ընկեր է սև թագու էտև.—Բոց, ծուխ:  
 Մեր դուռը կօլ մը կայ, կօլի մէջ օձ մը կայ, օձի բերան մընան  
 մը կայ.—Ճրագ:  
 Պապս հագե հազար քերք, ճալա կսէ կը մսիմ.—Կաղամբ:  
 Սարէն ձորէն ձէն կուգայ. ձին անօթի տուն կուգայ,—Դավուլ:  
 Տուն մը ունիմ. լիքը տաշխ.—Ատամներ:



## 12.

## Վաղարօտագոսի բարբառով.

Ալ եզ, բալ եզ, շուարած կաղնած եզ, քանի բարձեմ, տար  
եզ — Սիւն:

Ալ եզ, բալ եզ, քանի բարձեմ, տար եզ.—Գդալ:  
Բռնեմ: բռնու մին ա, թալեմ, տնով մին ա.—Ճրագ:

Գիշեր ցերեկ մի ոտի կողնած.—Տուն:

Դենեմ վրին պանց անեմ՝ երկու կողքիցը կախ անեմ. չոր կո-  
խեմ, թաց հանեմ.—Թամբ, սանձ:

Նափննիս տակդ, քօլօզս ծակդ.—Նրկանաքար:

Նրկաթէ կօճոճ, մսէ խուփ.—Պայտ:

Էն ինչ ա, ալըրից մանալը, ըղտից բարձր.—Մուխ:

Էն ինչ ա, Գշերով կը թռնի մօրդ շլակը.—Կուժ:

Էն ինչ ա, թիզ մի կոխեմ, անուշ քնես.—Դուսն. փակ:

Էն ինչ ա, ծէրը էրկինքն ա.—Մուխ:

Էն ինչ ա, մօրդ գոգին բարե կտայ.—Խնոցի:

Էս տեղից Էրեւան, մանաւր-մանաւր քերեղան.—Ձիու ոտքերու  
հետք:

Էրկաթէ պղինձ, փէտէ խուփ.—

Էրկի, կնիկ կռուեցին, էլան էրթիք փռուեցին.—Մուխ:

Էրէ, էրէ, չգար. մէրէ, մէրէ, կգայ.—Շրթունքները:

Էրկէն աղիք, ծէրը ծաղիք.—Ճրագ:

Ըսդի դար, ընդի դար, մէջը անդադար.—Գետ:

Թուրքի լամուկ վաղէվազ, գօտիքը քառսուն կեազ.—Ջրհորի  
դռն:

Իրեք ջան, տաս ոտ, քչեմ, կեթայ, չքչեմ կաղնի.—Սայլ—եր-  
կու եզ և վարդը:

Հաւք մի էկաւ Էրեւանայ, Էրկաթ կայ ընդոր կտուց. ով չհանի,  
ինոր մօր . ուց.—Իրկ:

Ձին մտաւ ձորը, քուռակը փորը. քուռակի փորին էլ մի քու-  
ռակ.—Միրան:

Հանք-հանք, հրամանք, օխտը դռան դէմ առանք.—Մեծ պահք:

Մէկ գլուխ, քառսուն աչք.—Տրեխ:

Մի կով ունեմ, ուրից քամաւա էմ անում, ճրագուն էրեւում ա.  
—Թունդիքը:

Պուճուր աղբէր փախնում ա, մեծ ընկնում ա քամակ,

Չար էրեան չկարում բռնի.—Սայլի ակներ:

Մի կով ունեմ, պտկներ կը նմանի սպահանի,

Տարին մի հետ կաթ կտայ.—Այգի:

Շապիկ ունի կարած չի, ալուր ունի ջաղցի չի, փետուր ունի տաշած չի.—Փշատ:

Սև ա սաթի նման, սիստակ ա կաթի նման, կարմիր ա վարդի նման, մոնց կեթայ մարդի նման.—Հեռագիր, աքաղաղ:

Սև սատանան պատից կախ.—Նափնճայ:

Վեր ունեմ, վրէժ դնեմ. կողքերիցդ կախ անեմ, պոչիդ տակից պանդ անեմ. չոր կոխեմ թաց հանեմ.—Ձիու կաղամած և սանձ:

Տասներկու մարդ մի ծառից քաշում են.—Տարի և ամիսներ:

Փէտ փէտին աղբէր, ջրին հօրողբէր. աւագ սարկաւագ, չի մտնում քաղաք.—Նաւ:

### 13.

Երեւոյ Ղարաբաղի գիւղի բարբառով.

Ալ եզներ, պալ եզներ, չիւարած՝ կայնած եզներ.—Սիւն:

Շուաքը լիքը քաւ, գլխները Ֆրաս.—Հաւ:

Նստայ հովը, կթի կովը, գմբիկ դարկի, ընկայ ծովը.—

Պապէն նստէ առուն, կարպետ մըջ օռուն.—Լու:

Մեր դուռ մի կօլ կայ, կօլի մէջ մի օձ կայ, գլխուն մի Ֆրաս կայ.—Լամբ:

Ըստե պուպուզ, ընտե պուպուզ, էրդկէն դուռ.—Արեւի շառաւիղ:

Արապստրակ, քարէ վաստակ, քանի վաղա, փոր դարդակ.—Ջրաղաց:

Մանտը—մանտը քերեկան, ըստուց չուր յերեան.—Աստղեր:

Յէլայ լեռը, քաջի թեյը, թափաւ սուլքան սիսեռը.—Կարկուտ:

Սորէն ձորէն ձէն գուգայ, ձինն անօթի տուն գուգայ.—Դաւուր:

Տասուերկու սուլքան, իրար ետեւ կէրթան.—Գութան:

Բռնեմ բռնիս մէկ, բաց թողնեմ անովս մէկ.—Ճրագ:

Աի բան ունեմ աչքեր հազար, յիրկուս մթան կէրթայ բազար.—Ալուր մաղա:



## 14.

Ալիբեկու գիւղի բարբառով \*)).

Ասեմ. արի—արի, չի գայ, որ ասեմ, մի արի, կգայ, —Շրթունք:  
Անբոյսը բարձեցին անձնին, անդադարով անցկացան.—Ազ.

Չորի, դեռ:

Դչերը բանում ա, ցերեկը դինջանում.—Անկողին:

Դանկով տուրի, գուռը բացի, մտայ նեքսե, ազօթք արի. էլադ  
դրսե, ժողովք արի—Ձմերուկ:

Էրկէն աղիք, ծէրը ծաղիկ.—Վառած մօմ:

Էրկու տուն, մի սուն.—Քիթ:

Ըս տե պուպուզ, ըն տե պուպուզ, հերթովը դսւս.—Շողքը:

Կարպետը փռեմ, լաքանը դնեմ, գչերը ցրուեմ.—Նրկինք, լուսին, աստղեր:

Կարմիր եզը տանն ա բառանջում, սե եզը կտուրը.—Կրակ և ծուխ:

Մեզ ունենք մի ոտնանի, որ դուս գայ, գէլը կտանի.—Սունկ:

Մի կով ունեմ, կաթ կտայ, տուն չի գայ.—Այգին:

Մութ տուն, գող է մէջը քուն, էրկաթէ սուն.—Հրացան:

Մի տուն ունեմ, սուն չունի.—Նրկինք:

Նեղ ու կուր մէջը լիքը կարմիր ուլինք.—Նուռ:

Նապաստակ, քարի վաստակ,

Քանի վազեո, փորդ դարտակ.—Ջրաղաց:

Ոչ ցորեն եմ, ոչ գարի, որ հողագործ ինձ ցանի,

Առանց ձեռի հուցած եմ, առանց կրակ թխած եմ,

Թօնիր, ջաղաց տեսած չեմ.—Մեղր:

Սե սլայ, սիպտակ սլայ, խաթուն մէջը կը սլվլայ.—Աչքեր:

Տակը քար ա, քար չէ, վերե քար ա, քար չէ,

Ձու կածէ, հաւ չէ, խոտ կուածէ, կով չէ.—Կրիա:

Օրան—օրան շուռ ա գալի, ոտներ չունի, ման ա գալի, բեւ  
բան չունի, կուլ ա տալի.—Ջուր:

\*) Գրի առած է Տէր. Դէորդ Մյվաղեան:

## I5.

## ԳՐԱԿԱՆ ԽԱՆՆԵԼՈՒՆԵՐ.

Բան մի կգայ այն դաշտէն, մի խուրջ ցախ շալակած.— Ողնի՜  
Գերեզմանը ջուր, պատանքը միս, ինքը մէջը կենդանի.— Յով-  
նան:

Եկաւ այնպէս, ինչպէս խան. նստաւ ինչպէս սուլթան. զնաց  
ինչպէս Թափառական.— Զինն:

Երկու կին իրենց այրերու հետ աղբիւր գնացին, տեսան ճա-  
նապարհէն երկու մարդ կգան. կանայք ճանաչեցին եկողներին ու  
իրենց այրիներուն ասացին.— Ոտի գանգնեցէք մեր այրեր, այն կող-  
մէն կգան մեր այրեր. թէ ձեր հայրեր և թէ մեր այրեր, թէ ձեր  
պապեր և թէ մեր կէսրայրներ: Որոնք էին եկողները:

— Յիշեալ կանանց նախկին ամուսիններն էին, կանայք տես-  
նելով սրանք պանդխտութեան մէջ ուշացան, այս կանանց մին միւսի  
տղի հետ պսակուած էր, նոյնպէս միւսը:

Թուրքը պանդխտութենէ վերադարձած միջոցին, 20 տարեկան  
մի երիտասարդ կը դիմաւորէ իրեն: Թուրքը ճանաչելով երիտասար-  
դին, կասէ.— Բարի եկար, բարի տղա, կնոջէս ինձ եղբայր եղած  
տղա. գնա՛, հորդ ասա որդիդ եկաւ, մօրդ ասա այրդ եկաւ:

Այս տղան մարդու ինչն էր:

Երկու թուրք երկար պանդխտութենէ վերադարձան, իրենց  
գիւղի աղբիւրի մօտ պատահեցան երկու կիներու, կտնայք իրարու  
ասացին.

— Սրանք մեր այրերն ու այրերու հայրերն են: (Լուծէք):

Փականքը ջուր, բանալին փայտ, որսը ազատուեցաւ, որսորդը  
բռնուեցաւ.— Մովսէս և Փարաւոն:

Մարդ մի կար, կաշնատէք, մինը չորսին բեռ կանէր, որդին  
հօրը վրայ կը պսակէր.— Գաբրիէլ հրեշտակ, Թադադ, հոդ:  
Սլէ սլման, նղոսն քումբան, «չ հայ է, «չ իւստութեամբ.— Օձ:  
Տաս ոտք, երեք գլուխ. վերկը փայտ, ներքեւ խար.— Կամ եք ջողը:  
Վեց թիզ. մի միլ, երկու հալ, մի խասմախ.— Կշտը:

Փաշա մի աշխարհ էկած է, միտն ... չունի. օրը երկու խոյ  
կուտէ, մէջը ուկոր չկայ.— Նոր ծնած երախայ:

Քառասուն տղայ ինչպէս վաստակեցար. ասացին մէկին:

— Օրը մէկ, չաբաթը մէկ. ամիսը մէկ, տարին մէկ.— Օրը մի  
անգամ համ ճաց կուտեմ. չաբաթը մի անգամ կածիրուեմ, ամիսը մի  
անգամ կը լողանամ, տարին մի անգամ մերձաւորութիւն կանեմ,  
պատասխանեց: